<<Կրթություն առանց սահմանի>> ՀԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Ուսուցիչ՝ Ա. Գևորգյան

Ղեկավար՝ Վ. Բաբաջանյան

Երևանի Գ.Վարդանյանի անվան հ. 192 **հիմն. դպրոց**

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն 3

1. Ուսուցչի մասնագիտությունը և նրան ներկայացվող պահանջները 5

2. Ստեղծագործական աշխատանքը, որպես ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման միջոց 11

3.Ուսուցչի հետազոտական աշխատանքները որպես առարկայական և մասնագիտական զարգացման գործոն 14

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ուսուցիչ, ով արագորեն կհարմարվի կրթական նորամուծություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին ու հասարակության կրթական պահանջմունքներին:

Ուսուցչի մանկավարժական գործունեությունը՝ որպես բարձր որակավորմամբ մասնագետի մասնագիտական աշխատանք, բնութագրվում է սովորողների անձի դաստիարակության, ուսուցման, զարգացման և ինքնազարգացման համար մանկավարժական գործընթացում անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ: Ժամանակակից հասարակության պահանջները, աշխատանքի նոր շուկան որոշում են ուսուցչի՝ որպես անձնավորության, մանկավարժական գործունեության դինամիկ փոփոխությունների հետազոտության անհրաժեշտությունը, որը կողմնորոշվում է կենսական և մասնագիտական ակտիվությամբ, որն օգնում է ուսուցչի պահանջներն ու նպատակները համատեղել աշակերտների հնարավորությունների, ցանկությունների և նպատակների հետ:

Ուսուցչի մասնագիտական գործունեությունը կոչված է՝

- ապահովելու սովորողների բարոյական սկզբունքների և վարքի հմտությունների յուրացումը հասարակությունում,
- ձևավորելու իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունք (տարբերել գեղեցիկը տգեղից, հաստատել գեղեցիկը կյանքում),
- ամրացնելու երեխաների առողջությունը, ապահովելու նրանց ֆիզիկական ուժերի և կարողությունների զարգացումը:

Հետազոտության **նպատակն** է տեսականորեն հիմնավորել ուսուցչի ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը:

Այդ նպատակադրումով մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ **խնդիրների** ուսումնասիրությունը.

- բացահայտել ուսուցչի մասնագիտությունը և նրան ներկայացվող պահանջները,
- վերլուծել կոմպոտենցիային (կարողությունների վրա հիմնված) մոտեցումների ուսուցչի մասնագիտական պատրաստության գործընթացը,
- պարզաբանել հետազոտական աշխատանքների նշանակությունը

- վերլուծել ստեղծագործական և հետազոտական աշխատանքների առանձնահատկությունները առարկայական և մասնագիտական կատարելագործման գործընթացում:

Մեր հետազոտության **առարկան** ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների կատարելագործման հիմնախնդիրներն են ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով:

Թեմայի հետազոտվածության աստիճանը: Մեր ուսումնասիրության մի շարք տեսանկյուններ դիտարկվել են Յու. Բաբանսկու, Ա. Բելյաևայի, Ա. Բոնդարևսկայայի, Մ. Մանուկյանի, Հ. Պետրոսյանի, Ռ. Պետրոսյանի և ուրիշների հետազոտություններում:

1. Ուսուցչի մասնագիտությունը և նրան ներկայացվող պահանջները

Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն ենթադրում է որոշակի պահանջներ նրանցով զբաղվողների նկատմամբ: Դրանք են՝ մասնագիտական բարձր վարպետությունը, գիտելիքների ու հմտությունների գործածման կարողությունը և այլն: Ուսուցիչները իրար են կապում տարբեր ժամանակաշրջաններ ու սերունդների, փոխանցում և տարածում են համամարդկային մշակութային արժեքները, ձևավորում են ապագայի սերունդը: Մի հին ու իմաստուն ասացվածք կա. «Ուսուցիչն է ստեղծում ազգը»: Այս իմաստությունը այժմեական է նաև մեր օրերում: Այն իր մեջ խտացնում է ուսուցչի աշխատանքի սոցիալական ու մարդասիրական ողջ իմաստը: Ժառանգելով «բոլոր ժամանակների ու ժողովուրդների¦ առաջավոր մանկավարժների աշխատանքի սկզբունքը՝ ուսուցչությունը ներկայանում է որպես ժամանակակից հասարակության ստեղծագործ ուժ:

Մանկավարժը կոչված է ոչ միայն սովորեցնելու գիտության հիմունքները երեխաներին, խթանելու նրանց բազմակողմանի զարգացումը, այլև ձևավորելու սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ, պատրաստակամություն՝ սեփական աշխատանքով մասնակցելու նյութական բարիքների արտադրությանը: Իրականում ուսուցիչը կանգնած է երկրի արտադրողական ուժերի զարգացման, նրանց առաջընթացի, ստեղծագործական ներուժի ակունքներում:

Հայաստանում հայալեզու դպրոցների ձևավորման հետ մեկտեղ ձևավորվում է նաև ուսուցչի կերպարի, նրա մասնագիտական պատրաստության, վարպետության, դերի, մասնագիտական գործունեության պահանջների, չափանիշների մասին գաղափարները:

Ց. Սիմոնյանը նշում է, որ «Մաշտոցը անմիջապես Վաղարշապատում հիմնում է մեսրոպագիր առաջին դպրոցը՝ ուսուցիչներ պատրաստելու մեր առաջին դպրոցը», նաև «և քանի որ դրանց հիմնական նպատակներից էր նաև դասատուների պատրաստումը, անցել են նաև դասավանդման հետ կապված տեսական գիտելիքներ և գործնական դասատվություն»[1]:

Հայկական վերածննդի նշանավոր գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին մատնանշում է, որ ուսուցիչն ուսուցման գործընթացը կազմակերպելիս պետք է

[1] **Ց. Սիմոնյան,** Ակնարկներ հայ մանկավարժության պատմության, Երևան 1998, էջ 14-15:

ունենա «հոգատարություն իր սանիկի նկատմամբ, սիրով ու եռանդով ուսուցանի, հետաքրքրություն արթնացնի գիտության նկատմամբ»[2]:

Գրիգոր Տաթևացին, որը 30 տարի ղեկավարել է Տաթևի համալսարանը, իր «Սահմանադրություն դաստիարակության» գրքում դիտարկել է ուսուցչի մասնագիտական և մեթոդական պատրաստության կատարելագործման մի շարք հարցեր: Ըստ նրա՝ ուսուցիչը պետք է լինի գիտուն, լինի ոչ շատ գորովագութ և ոչ շատ խստապահանջ, պարտավոր է հիմնավորապես ճանաչել սանին, հաշվի առնել նրա անհատական ու տարիքային առանձնահատկությունները, հետաքրքիր ձևով կազմակերպել ուսուցման գործընթացը, նյութը շարադրել պարզ, հասկանալի, խթանի սովորողների ինքնուրույն վերլուծելու և համադրելու կարողությունը: Ականավոր մանկավարժը նաև մատնանշում է, որ ուսուցչից է կախված երեխայի ապագան. Ուսուցիչն իր կյանքով ու գործունեությամբ իմաստության հունդեր է սերմանում, նրանց տալիս է կրթություն, նշում նրանց կյանքի ուղին[3]:

Ուսուցչի մասնագիտական գիտելիքներին ու մեթոդական պատրաստությանը մեծ տեղ էր տալիս արևմտահայ հասարակական գործիչ Մ. Մամուրյանը: Ըստ նրա՝ «ուսուցիչը պետք է դաստիարակի կոչում ունեբա իր մեջ, սիրի իր արվեստը և այդ զգացմունքով լի գործադրի բոլոր միջոցները՝ հանուն երեխաների առաջադիմության…: Ուսուցչի համար երկարյին ամենամեծ հաճույքն է ուսուցանել սաներին և ձևավորել, մշակել նրանց բնավորությունը»[4]:

Ըստ Ջեկ Լոնդոնի[a] «ուսուցիչը կարող է սովորեցնել այնքան ժամանակ, քանի դեռ ինքն է սովորում, հենց նա դադարի սովորելուց, կդադարի ուսուցիչ լինելուց»[5]:

Ուսուցչի բարձր կոչումը ենթադրում է նաև բարձր պահանջներ նրա անձի նկատմամբ: Դա հասկանում էին թե անցյալի նշանավոր մանկավարժները, թե մեր ժամանակակիցները: Յ. Ա. Կամենսկին կոչ էր անում ուսուցիչներին սիրել իրենց մասնագիտությունը, քանի որ այն ամենակարևորն էր երկրի վրա, իմանալ երեխաների հոգեբանությունը, հետաքրքրվել նրանց ներքնաշխարհով, ուսումնասիրել նրանց անհատական ընդունակությունները[6]:

---

[2] Նույն տեղում, էջ 219:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Феномен педагогической деятельности. Учебное пособие.Новосибирск. ШКОЛА. 2006, с. 54-55.

[6] **И. П. Подласый**, Педагогика, Москва, 2003, с. 9.

Ա. Դիստերվեգը գրել է, որ ուսուցիչը միայն այնքան ժամանակ է ունակ դաստիարակելու ու սովորեցնելու, քանի դեռ ինքն զբաղվում իր դաստիարակությամբ և կրթությամբ[7]:

Այսինքն՝ դարեր շարունակ քննարկվող ուսուցչի մասնագիտական պատրաստության ու կատարելագործման հիմնախնդիրը մեր ժամանակաշրջանի համատեքստում սոցիալական նշանակություն է ձեռք բերել:

Ա. Լիբերմանը և Լ. Միլլերը առանձնացրել են ուսուցչի մասնագիտական պատրաստությանը, նրա գործունեությանը նպաստող երեք գործընթաց.

1. մասնագիտական համայնքի զարգացում,
2. արտաքին ու ներքին գիտելիքների միավորում,
3. համագործակցության էթիկայի ստեղծում[8]:

Վ. Սլաստենինը, դիտարկելով ուսուցչի մասնագիտական պատրաստության հիմնախնդիրը, շեշտում է, որ ինքնակատարելագործման պլանում իր վրա աշխատելու փորձը նախադրյալ է ստեղծում մասնագիտական ինքնադաստիարակության, որը ենթադրում է գիտակցական աշխատանք իր անձի զարգացման նկատմամբ որպես մասնագետի՝ իր անհատական անկրկնելի առանձնահատկությունների հարմարեցումը մանկավարժական գործունեության պահանջներին, մասնագիտական կոմպետենցիաների մշակման կատարելագործումը և անձի սոցիալ-բարոյական և այլ որակների անընդհատ զարգացումը[9]:

Թե՛ միջնադարի և թե՛ մեր ժամանակների նշանավոր մանկավարժներին միավորում է այն միտքը, թե.

- ✓ ուսուցիչը պիտի ունենա բարձր աշխատունակություն, ուժերը արագ վերականգնելու ընդունակություն, ուշադրությունը կենտրոնացնելու հմտություն, մշտապես լինի ակտիվ և առույգ, աշխատանքային ողջ օրվա ընթացքում կարողանա պահպանել կենսունակությունը, կարողանա դիմադրել բացասական ազդակներին,
- ✓ ուսուցիչը պիտի զուսպ լինի, ցուցաբերի համբերություն, հավասարակշռություն, տարբերվի հստակ արտասանությամբ, մտքերի արտահայտիչ շարադրմամբ,
- ✓ ուսուցիչը պիտի ունենա բարձր աշխատունակություն, արագ վճիռներ կայացնելու կարողություն, կարողանա մի գործունեությունից արագ անցում կատարել մի այլ

---

[7] **Ա. Դիստերվեգ**, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1963, էջ 74, **Ա. Բալյան,** Մանկավարժական վարպետության հիմունքները, Երևան, 1988, էջ 12:

[8] **Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ի. Օհանովա և ուրիշներ,** Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 258-261:

[9] **И. И. Проданов**, Исследование путей управления профессионализмом учителя в инновационной системи образования региона, Санкт-Петербург, 1988, с. 53.

գործի, պատրաստ լինելի փորձարարության, արագ հարմարվի նոր միջավայրին, ունենա շփումներ հաստատելու կարողություն, անծանոթ շրջապատում և անծանոթ մարդկանց հետ ազատ զգալու ընդունակություն:

Մասնագիտական կոմպետենտությունը դիտարկվում է որպես խնդիրներ լուծելու կարողություն և այս կամ այն ոլորտում իր մասնագիտական դերին պատրաստություն [10]:

Մասնագիտական կոպետենցիաները բաժանվում են երկու խմբի.

1. ընդհանրական կամ համամշակութային կոմպետենցիաներ (գործիքային, միջանձնային և համակարգային կամ համագիտական),

2. բուն մասնագիտական (ընդհանուր մասնագիտական և նեղ մասնագիտական)՝ հաշվի առնելով կոնկրետ կրթական ծրագրի և ուսանողների տվյալ խմբի առանձնահատկությունները:

Կոմպետենտային մոտեցման պարագայում նպատակահարմար է մասնագիտական կոմպետենցիաները նույնպես տարբերակել ըստ «կրթական ոլորտների» (“educational domain”), որոնց հանրագումարն էլ դառնում է մասնագիտական կոմպետենտությունը: Ընդ որում՝ մասնագիտական գործունեության յուրաքանչյուր գործառույթ հանդես է գալիս որպես որոշակի «կրթական ոլորտ»՝ իր կոմպետենցիաներով (մասնագիտական գործունեության պլանավորման, իրագործման, գնահատման և այլն):

Ժամանակակից կրթության պահանջներով արդյունավետ ուսուցում իրագործելու համար ուսուցիչը պետք է ունենա պետական մասնագիտական որակավորման չափանիշներին համապատասխան ընդհանուր կրթական, մասնագիտական-մեթոդական պատրաստվածություն, ինչպես նաև նեղ մասնագիտական գիտելիքներ և ունակություններ (կոմպետենցիաներ): Մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի կրթվածության ցուցանիշը և արժեհամակարգը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է ուսուցիչը կոմպետենտ (ձեռնահասու, խորագիտակ) գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում: Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ ավելացում: Ընդհանուր մանկավարժամեթոդական պատրաստվածության մեջ մտնում են հետևյալ բաժինները.

[10] **А. Г. Бермус,** Проблемы и перспективы реализации компетентностного подхода в образовании. http://student.km.ru/ref_show_frame.asp?id=EC9F03A06ED7444CA0AA35907325C13A .

1. դասավանդման համար անհրաժեշտ գիտելիքներ՝

- դպրոցական մանկավարժություն,
- տարիքային հոգեբանություն,
- դասավանդման մեթոդիկա,
- մասնագիտական իմացություն,

2. աշխատանքը պլանավորելու և կազմակերպելու կարողություններ՝

- առարկայի բովանդակության և կառուցվածքի իմացություն,
- ծրագրի բովանդակության արդյունավետ բաշխում առանձին դասընթացի և թեմատիկ միավորների,
- դասապլանի մշակում,
- ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու կարողություն,

3. ուսուցման գործընթացն իրագործելու կարողություն՝

- առարկայի յուրացումն ապահովող տարբեր մեթոդներ և հնարներ,
- գիտելիքներ սովորողների տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսական զարգացման մասին,
- կրթական, դաստիարակչական, մասնագիտական գործառույթների համամասնական իրագործում,
- սովորողների ընդունակությունների ու գիտելիքների իմացություն,
- անհատականացված /տարբերակված/, միևնույն ժամանակ հավասար իմացության իրագործում,

4. դասի համամասնական պլանավորում՝

- մատուցվող ուսումնական նյութի արժևորում և տեղի ու ծավալի առանձնացում առարկայի ընդհանուր բովանդակության մեջ,
- թեմաների հաջորդականության որոշում,
- թեմաների փոխկապակցվածության ապահովում,
- նյութի մատուցման հստակություն,
- կարբեր մակարդակների սովորողների համար դյուրըմբռնելիության ապահովում,

5. սովորողների գնահատում՝

- ուսուցման ակնկալիքների և արդյունքների համապատասխանության չափում,
- տիրապետում գնահատման տարբեր գործիքներին,
- գնահատման տեսակների տարբերակում,
- առարկային հատուկ գնահատման չափանիշների հստակեցում:

Այսպիսով՝ կրթության մասին ՀՀ օրենքի համատեքստում մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման ուսումնական ծրագրերը պետք է նպաստեն, որ ուսումնառության արդյունքում մանկավարժը տիրապետի.

1. իր աշխատանքը ծրագրելու կոմպետենցիային,
2. ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կոմպետենցիային,
3. գնահատման կոմպետենցիային՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի խրախուսման և նրա շարունակական զարգացումն ապահովող միջոց,
4. ուսուցման և դաստիարակության գործընթացին մշտապես անդրադարձ կատարելու կոմպետենցիային,
5. մասնագիտական զարգացման հմտություններին:

2. Ստեղծագործական աշխատանքը, որպես ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման միջոց

Ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումը և վերապատրաստումը սովորաբար իրականացվում է հատուկ հաստատություններում՝ մանկավարժական բուհերում, Կրթության ազգային ինստիտուտում, մեթոդական մասնախմբերում և այլն:

Մանկավարժական գործընթացը ենթարկվում է օբյեկտիվ օրենքներին, առանց դրանք հաշվի առնելու և օգտագործելու մանկավարժն իր գործունեության մեջ չի կարող հասնել հաջողության: Ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական համապատասխան պատրաստություն, պետք է իմանա ուսուցման և դաստիարակության բոլոր կարևորագույն օրինաչափությունները, կատարելագործի իր մանկավարժական մտածողությունը: Ինչպես Կ. Ուշինսկին է հաստատել, «մանկավարժական պրակտիկան առանց մանկավարժական տեսության նույնն է, ինչ հեքիմությունը բշկության մեջ»[11]:

Մանկավարժական տեսությունը տալիս է ընդհանուր կողմնորոշում, առաջադրում մանկավարժական խնդիրների լուծման օրինակներ, իսկ ընդհանուր դրույթները և սկզբունքները պետք է կիրառել՝ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքներն ու պայմանները:

Ուսուցչի մոտ հստակորեն ձևավորվում է գիտական մոտեցում աշակերտի անձի ձևավորման նկատմամբ, այդ գործընթացի գիտակցում, իմաստավորում և գնահատում, դաստիարակչական աշխատանքի նպատակն ընտրելիս նա նկատի է առնում անձի կառուցվածքային բաղադրիչները, որոնց օգնությամբ ու օժանդակությամբ իրականացվում է մանկավարժական գործընթացը: Մանկավարժական գործընթացի շրջանակներում ներառվում են անձի ներուժը կազմող բաղադրիչներ՝ ինտելեկտուալ, արժեքային, հաղորդակցական և այլն, և անձի ձևավորման ու զարգացման համակողմանիությանը նպաստող ուղղություններ՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական և այլն: Ոչ մի գործընթաց աննպատակ չի ընթանում. այն լուծում է ինչ-որ կարևոր հարց՝ դաստիարակչական, զարգացման և ձևավորման ուղղվածություններով, ցանկացած գործունեություն ավարտվում է արդյունքների վերլուծությամբ ու ամփոփմամբ:

Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում կարևորվում է նաև ուսուցչի հետազո-

[11] **Կ. Ուշինսկի,** Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981, էջ 442:

տական գործունեությունը, որի կարևոր բաղադրիչը նրա ստեղծագործական ռ-ոնումների ակտիվացման խնդիրն է; Այն այսօր շատ արդիական հնչեղություն ունի հանրակրթական դպրոցի համար;

Ուսումնական ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և ու-ղեցույցները օգնում են ուսուցչին լուծելու մի շարք հարցեր. «ի՞նչ սովորեցնել», «ո՞ւմ սովորեցնել» և «ինչպե՞ս սովորեցնել»:

Յուրաքանչյուր ուսուցիչ խոր զբաղվի ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, որոնք նրա վարպետության կատարելագործման լավագույն ուղիներն են: Նա, ուսումնասիրելով իր մասնագիտության վերաբերյալ լույս տեսած գիտական գրականությունը, հոդվածները, նորությունները, բարձրացնում է պրոֆեսիոնալ և մասնագիտական մակարդակը, ուսումնասիրում է նաև նորարար ուսուցիչների առաջավոր փորձը և վերցնելով այն անհրաժեշտը և կարևորը, որը նրան հարկավոր է իր հետագա աշխատանքում օգտագործելու համար: Ինչպես նկատում են մեծ մանկավարժները՝ ոչ մի առաջավոր փորձ չի կարելի ամբողջությամբ վերցնել և ներդնել:

Իրավացի է Պ.Պ. Բրոնսկին, երբ գրում է, որ նոր դպրոցը հենց ուսուցչի համար կյանքի և ստեղծագործական դպրոց է, իսկ ուսուցիչը « արվեստագետ», որին թույլ է տրվում ազատ ստեղծագործել, արարել և, բացի այդ, ըստ նրա, մարդիկ կյանքում մեկ անգամ են ստեղծագործող դառնում:

Ուսուցչի ստեղծագործական գործունեության նախնական հիմքերը դրվում են բարձրագույն դպրոցում, երբ նա ընտրում է ուսուցչի մասնագիտությունը, ստանում է տեսական խոր և կայուն գիտելիքներ, մանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք է բերում գործնական կարողություններ և հմտություններ, այստեղ էլ ձևավորվում են նրա մանկավարժական վարպետության նախադրյալները, իսկ հետագա մանկավարժական աշխատանքի ընթացքում, ինչպես նաև ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնակատարելագործման ճանապարհով նա հասնում է վարպետության բարձունքներին:

Այսօր ուսուցչի ստեղծագործական աճի հիմնահարցը ձեռք է բերում հատուկ կարևորություն: Մանկավարժի պրոֆեսիոնալ վարպետության կատարելագործումը գլխավոր պայման է ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի հետագա բարձրացման համար և հասցնում է նրան համապատասխան կյանքի պահանջներին [12](6,4):

Մանկավարժական ստեղծագործական գործունեության ուսումնասիրությանն առաջին անգամ անդրադարձել է Պ.Կ. Էնգելմայերը. «Լավ դաստիարակը հենց

[12] Հարությունյան Թ.Ս., Ժողովրդական ուսուցիչը, Ե., 2001, էջ 74:

նրանով է տարբերվում արհեստագործից, որ եթե վերջինս առաջնորդվում է վարժեցված հնարքներով, ապա առաջինը թափանցում է սանի անհատական առանձնահատկությունների էության մեջ և նրա նկատմամբ կիրառում է բարի մարդու իր իդեալը: Ի՞նչ է նշանակում դա: Դա նշանակում է, որ դաստիարակի մոտ ամենից առաջ կա իդեալ (I ակտ), այնուհետև նա այդ իդեալը կիրառում է տվյալ պայմաններին համապատասխան (II ակտ) և, վերջապես, կատարման ըն- թացքում օգտվում է ձեռք բերած մանկավարժական հմտություններից (III ակտ) [13] : Համակարծիք լինելով Էնգելմայերի հետ՝ նշենք, որ եթե բոլոր ուսուցիչներն առաջնորդվեն այդ բանաձևով, ապա նրանց աշխատանքը կլինի ստեղծագործական, իսկ արդյունքը՝ ստեղծագործություն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ուսուցչի ստեղծագործական գործունեությունն ունի սկիզբ, սակայն չունի վախճան, ավարտ, քանի որ ուսուցչի գործունեությունը շարունակվում է իր սաների մեջ, իր սաների միջոցով և իր սաների համար:

[13] Энгельмейер П.К., Эврология или всеобщая теория творчества, т.6, вып.1, 1914, с.73.

3.Ուսուցչի հետազոտական աշխատանքները որպես առարկայական և մասնագիտական զարգացման գործոն

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի ուսուցչի տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում:

Հետազոտական աշխատանք անվանենք ուսուցչի կողմից կատարվող այն աշխատանքների տեսակները, որոնք վերաբերվում են գիտելիքի ինքնուրույն բացահայտման և ձեռք բերած գիտելիքի ու հմտությունների պրակտիկ կիրառությանը:

Հետազոտական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ ուսուցչի մոտ:
- Մատուցել հետազոտական կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ:
- Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, ինքնահաստատմանը և կրթության շարունակության ապահովման ուղղված հմտությունների զարգացմանը:

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու ավանդական միջոց են, ինչպես նաև հետազոտական աշխատանքի տեսակ էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները:

Հետազոտական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- ուսուցիչը պետք է ուսումնասիրի տեսական գրականության տվյալները
- ծանոթ լինի այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- Ապահոված լինի հետազոտական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն)
- Վերլուծի և ամփոփի ստացված արդյունքները:

Հետազոտական աշխատանքների արդյունքում, ուսուցիչը ծանոթանում է նորար տեխնոլոգիաների հետ, ծանոթանում է առկա գիտական զարգացումներին և դրանք կարող է կիրառել առարկայի դասավանդման ընթացքում և հասնել ավելի մեծ արդյունքների ապահովման:

Եզրակացություն

Ուսուցչի մասնագիտական և առարկայական պատրաստության ուսումնասիրում բերում է հետյալ եզրակացություններին:

1. Կրթական բարեփոխումների արդի փուլում հատուկ կարևորություն է ստանում ուսուցչի մասնագիտական պատրաստության, նրա գործունեության կատարելագործման վերաբերյալ նորովի մոտեցումների և արդյունավետ տեխնոլոգիաների առաջադրումը, ինչպով պայմանավորված է կրթության որակի բարձրացումն ու դպրոցներում իրականացվող նորարարությունների արդյունավետությունը:
2. Ուսուցչի մասնագիտական կատարելագործման և մասնագիտական ինքնիրացման արդյունավետությունը պայմանավորված է նրա առանձնահատկություններով, ինչպես նաև մի շարք այլ գործոններով, որոնց հաշվառմանը զուգահեռ առաջադրվում են այդ գործընթացին նպաստող կազմակերպչական ու տեխնոլոգիական նոր կառուցվածքներ: Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակը պայմանավորված է նրա ռեֆլեքսիայի, ստեղծագործական մտածողության, մանկավարժական մշակույթի, մանկավարժական կոմպետենցիաների ձևավվորման գործոններով և կրթական գործընթացի որակի բարձրացմամբ:
3. Տեսական ու փորձարարական հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, նրա գործունեության կատարելագործման արդյունավտությունը ապահովվում են ինչպես մասնագիտական պատրաստվածության, այնպես էլ մանկավարժական գործունեության ընթացքում մտածողության և մանկավարժական էթիկայի ձևավորման միջոցով, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական առաջավոր փորձի յուրացման, մասնագիտական կոմպետենցիաների զարգացման ճանապարհով մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:

Ուսուցչի ողջ մանկավարժական գործունեությունը նպատակաուղղված է աշակերտի անձի ձևավորմանն ու զարգացմանը: Դա է պատճառը, որ ուսուցիչը պետք է ամենասովորական առօրյայում անգամ իր ուշադրությունը կենտրոնացնի սովորողների անհատականությունը ձևավորելու վրա՝ նկատի ունենալով աշակերտի այդ որակն իբրև մարդկային կարևոր հատկանիշ, իբրև անհատի ձևավորման ու զարգացման փուլ ու մակարդակ, իբրև մարդու կենսակերպի առանձնահատուկ ձև, նրա ինքնատիպության, յուրօրինակության, անկրկնելիության գրավական:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Օհանովա Ի. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004
2. Բալյան Ա., Մանկավարժական վարպետության հիմունքները, Երևան, 1988:
3. Դիստերվեգ Ա., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1963,
4. Հարությունյան Թ.Ս., Ժողովրդական ուսուցիչը, Ե., 2001:
5. Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981:
6. Սիմոնյան Ց., Ակնարկներ հայ մանկավարժության պատմության, Երևան 1998:
7. Бермус А. Г., Проблемы и перспективы реализации компетентностного подхода в образовании. http://student.km.ru/ref_show_frame.asp?id=EC9F03A06ED7444CA0AA35907325C13A
8. Подласый И. П., Педагогика, Москва, 2003.
9. Проданов И. И., Исследование путей управления профессионализмом учителя в инновационной системи образования региона, Санкт-Петербург, 1988.
10. Феномен педагогической деятельности. Учебное пособие.Новосибирск. ШКОЛА. 2006.
11. Энгельмейер П.К., Эврология или всеобщая теория творчества, т.6, вып.1, 1914.
12. Януш Корчак, Как любить ребенка, Москва, 1999.